

# Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ և դրա հետագա քաղաքական հեռանկարը

*Մահակյան Հ. Ս.*

*ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ իրանագիտության ամբիոն, մագիստրանտ  
(Երևան, Հայաստան)  
sahakyanhrant1997@gmail.com*

**Վճռորոշ բառեր՝** Իրան, Կասպից ծով, գազաթնաժողով, գազ, կոնվենցիա

## **Позиция ИРИ по правовому статусу Каспийского моря и его будущая политическая перспектива**

*Саакян Г. С.*

*ЕГУ, факультет востоковедения, кафедра иранских исследований, магистр (Ереван, Армения)  
sahakyanhrant1997@gmail.com*

**Резюме:** Важнейшей частью региональной политики ИРИ является вопрос правового статуса Каспийского моря. Выход к Каспийскому морю дает Ирану не только возможность сотрудничества, но и создает противоречия с другими прикаспийскими странами. В настоящее время, все прикаспийские страны в рамках переговорного процесса стремятся найти устраивающие всех решения. Принятые, на состоявшемся в 2018 году в Актау саммите глав прикаспийских государств документ, выработал дорожную карту для решения спорных вопросов, однако, напряженные международные отношения не дают возможности для ее претворения. В настоящей статье, автор подробно изложил сложные взаимоотношения и спорные вопросы прикаспийских государств.

**Ключевые слова:** Иран, Каспийское море, саммит, газ, конвенция

## **IRI Position on the Legalstatus of the Caspian Sea and its Future Political Prospects**

*Sahakyan H.S.*

*YSU, Faculty of Oriental Studies, Department of Iranian Studies, Master (Yerevan, Armenia)  
sahakyanhrant1997@gmail.com*

**Abstract:** One of the integral parts of IRI regional policy is to define the legal status of the Caspian Sea. Being a littoral State to Caspian makes advantages for Iran but at the same time, it makes disagreements with the other littoral States too. Today littoral States still strive to set these sensitive issues by consensus through different frameworks of negotiations. The Convention which signed during the Aktau summit draws a roadmap to regulate the Caspian issue, but the current geopolitical situation doesn't give a chance to realize it. In this article, we have tried to reflect the current relations between littoral states and examine disputable issues in detail.

**Keywords:** Iran, the Caspian Sea, Summit, Gas, Convention

Կասպից ծովի<sup>1</sup> սահմանազատման, նրա ռեալիտետներից օգտվելու և նավարկության համար օգտագործելու հարցերը վերջին 300 տարիներին ընթացքում մշտապես եղել են տարածաշրջանի օրակարգի կարևոր բաղադրիչները, որոնք մինչ օրս վերջնական լուծում չեն ստացել: Այս առումով հատկապես կա-

րևոր են ռուս-իրանական և սովետա-իրանական հարաբերություններում տեղ գտած պայմանագրերը, որոնք մինչև 1991թ. ապահովել են Կասպից ծովում պետությունների իրավունքների իրացումը:

Ռուս-իրանական հարաբերությունները այսօր բազմաշերտ են և բազմաբովանդակ: Այս երկրները համաշխարհային քաղաքական, տնտեսական, մշակութային ոլորտներում մշտապես առաջ են տանում իրենց օրակարգը և համարվում են միջազգային քաղաքականության սուբյեկտներ: Ռուսաստանը

<sup>1</sup> Այս աշխատանքում «Կասպից ծով» արտահայտությունը օգտագործել ենք որպես չեզոք, քաղաքական-իրավական լիցքից զերծ արտահայտություն: Տեքստում առկա է «ի՛ն» և «ծով» տերմինների կիրառումը, որոնք ուղեկցվում են ծանոթագրություններով և համապատասխան աղբյուրներից հղումներով:

և Իրանը ընդհանուր ցամաքային սահման չունեն, սակայն Կասպից ծովով կապված են միմյանց և համարվում են «սահմանակից» պետություններ: Երկու երկրների միջև հարաբերությունների լայն շրջանակը իր մեջ ներառում է հենց այդ «սահմանը» հանդիսացող Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը:

Ռուս-իրանական պաշտոնական շփումներում առաջին անգամ Կասպից ծովի պատկանելության հարցը բարձրացվել է Գյուլիստանի հաշտության պայմանագրով և վերահաստատվել Թուրքմենչայի պայմանագրով: 1826-1828 թթ. պատերազմում պարտությունից հետո իրանական կողմը, ստորագրելով Թուրքմենչայի պայմանագիրը և նրան կից առևտրական հավելվածը, ի թիվս մի շարք պայմանների՝ [1] 5% մաքսատուրք բոլոր ապրանքների համար, [2] կասպիական նավահանգիստների հասանելիություն ռուսական բոլոր առևտրական նավերի համար, [3] հյուպատոսներ նշանակելու, [4] երկու երկրների առևտրականներին անձնագրեր տրամադրելու իրավունք, ստիպված էր ընդունել նաև Կասպից ծովի տարածքում ռազմական նավատորմ պահելու ռուսական կողմի բացառիկ իրավունքը (պայմանագրի հոդված VIII):

1921թ. Մոսկվայում ստորագրված սովետա-իրանական բարեկամության մասին համաձայնագրով երկու երկրների միջև հարաբերությունները թևակոխեցին մի նոր փուլ: Այս համաձայնագրի առաջին կետով սովետական կառավարությունը հայտարարում է, «...Պարսկաստանի<sup>2</sup> նկատմամբ Ռուսաստանը հրաժարվում է իր բանվորների և գյուղացիների կողմից տապալած Ռուսական կայսրության վարած բռնի քաղաքականությունից»: Ռուսաստանի նոր կառավարությունը Պարսկաստանի հետ նախորդ ցարական կառավարության կողմից կնքված բոլոր դաշինքները, համաձայնագրերը, կոնվենցիաները և պայմանագրերը հայտարարեց ուժը կորցրած: Մինևույն ժամանակ չեղարկվեցին երրորդ երկրների հետ կնքված բոլոր այն կոնվենցիաները և պայմանագրերը, որոնք ուղղված էին Իրանի դեմ՝ հայտարարելով, «... հրաժարում

բուն բոլոր նախաձեռնություններից, որոնք կարող են թուլացնել կամ խախտել Պարսկաստանի ինքնիշխանությունը»:

Մոսկվայի փետրվարի 26-ի պայմանագրի XI հոդվածով իր ուժը կորցրած է համարվում ռուս-պարսկական 1828թ. կնքված Թուրքմենչայի պայմանագիրը: Ռուսաստան վերականգնեց իրանական կողմի՝ Կասպից ծովում նավատորմ ունենալու իրավունքը: Կողմերը համաձայնություն ձեռք բերեցին նաև Կասպից ծովի ջրերը իրենց դրոշների ներքո հավասարապես նավարկության համար օգտագործելու շուրջ<sup>3</sup>: Պայմանագրի VI կետում նշվում է՝ «... եթե երրորդ երկիրը փորձի ռազմական ճանապարհով Պարսկաստանի տարածքում իրականացնի նվաճողական քաղաքականություն կամ Պարսկաստանի տարածքը վերածի Ռուսաստանի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու կենտրոնակայանի, և եթե այդ քայլերի արդյունքում վտանգի տակ հայտնվեն Ռուսաստանի և նրա դաշնակիցների սահմանները, ու Ռուսաստանի զգուշացումից հետո պարսկական կառավարությունը չկարողանա չեզոքացնել վտանգը, սովետական կառավարությունը կարող է իր գործերը մտցնել Պարսկաստանի տարածք, պաշտպանական գործողությունները կազմակերպելու համար: Վտանգի վերացման դեպքում սովետական գործերը անմիջապես պետք է լքեն Պարսկաստանի տարածքը»: Նույն պայմանագրի VII կետով սահմանվում էր նաև Կասպից ծովի տարածքի անվտանգության միջոցառումների հարցը՝ պայմանավորվելով, որ եթե պարսկական դրոշի տակ նավարկող նավերի անձնակազմում հայտնաբերվի երրորդ պետության քաղաքացի, որը այդտեղ է գտնվում ոչ բարեկամական մտադրություններով, սովետական կողմը կարող է պահանջել պարսկական կողմից անմիջապես հեռացնել կասկածյալին:

1940թ. մարտի 25-ին Թեհրանում ստորագրվում է ԽՍՀՄ և շահական Իրանի միջև առևտրի և ծովագնացության մասին պայմանագիրը, որի XIII հոդվածով վերահաստատում են 1921 թ. փետրվարի 26-ի պայմանագրով ամրակայված կետը, որի համաձայն Կասպից ծովի տարածքում կարող են նավարկել միայն

<sup>2</sup> Նկատենք, որ 1921թ. Իրանը դեռևս կոչվում էր Պարսկաստան: Միայն 1935թ. հետո է, որ Ռեզա շահը հեռուստակոչով դիմում է աշխարհին և հորդորում այսուհետ իր երկիրը անվանել հին անվանումով՝ Իրան:

<sup>3</sup> Այս պայմանավորվածության հիմքում Կասպիցը հանդես էր գալիս որպես լին:

ԽՍՀՄ և Իրանի դրոշի ներքո քաղաքացիական, առևտրային և բեռնափոխադրող նավերը<sup>4</sup>: Կարգավորվում է միմյանց նավահանգիստներից օգտվելու կարգը, ինչպես նաև անդրադարձ է կատարվում Փարիզի 1926թ. հունիսի 26-ի միջազգային սանիտարական կոնվենցիայի համաձայն լճի ջրերը օգտագործելու կարգին: Համաձայնագրի IV կետով՝ «... կողմերը իրավունք ունեն իրենց դրոշի ներքո գտնվող նավերից զբաղվել ձկնորսությամբ ավից 10 ծովային մղոն խորության վրա՝ օգտվելով ծովամթերքի համար նախատեսված բեռնափոխադրման առավելություններից»: Այսինքն, ԽՍՀՄ-ը մոտ յոթ անգամ ավելի մեծ տարածք էր ստանում ձկնորսության համար, քան Իրանը:

ԽՍՀՄ փլուզումից հետո Կասպից ծովի շուրջ նոր իրադրություն սկսեց ձևավորվել: Ռուսաստանից և Իրանից բացի ծովի ջրերից օգտվելու հավակնություններ ներկայացրին նորանկախ երեք նախկին սովետական հանրապետություններ Ադրբեջանը, Ղազախստանը և Թուրքմենստանը: Անհրաժեշտություն է առաջանում կարգավորելու այս հանրապետությունների հարաբերությունները հատկապես Կասպից ծովի անդրծովյան էներգակիրներից և ձկնապաշարներից օգտվելու հարցում:

Իրանի Իսլամական Հանրապետությունը<sup>5</sup> Կասպից ծովի պատկանելության հարցով պնդում է, որ պետք է պահպանվեն ԽՍՀՄ-Իրան 1921 և 1940 թթ. պայմանավորվածությունները: Ծովի ավերին նոր պետությունների ձևավորումը հաշվի առնելով՝ 1991թ. Ալմա Աթայում իրանական և ԽՍՀՄ պատվիրակությունների կողմից առաջարկված Կասպից ծովի կառավարման կոնդուիմիումային՝ միասնական տարբերակը հավանության արժանացավ նորաստղեծ կասպիական երեք հանրապետությունների կողմից, սակայն քիչ անց հայտնաբերվեցին մեծ նավթագազային պաշարներ Ղազախստանի Քաշագան և Թենգիզ հորերում, Ադրբեջանի տարածքում բացվեց մեծ գազային պաշարներ ունեցող

Շահ Դենիզ հանքը, իսկ իր հերթին Թուրքմենստանը հայտնաբերեց աշխարհում իր գազի պաշարներով մեծությամբ երկրորդը հանդիսացող Գալբընըշի հանքը: Սա տարածաշրջանի վրա ուղղեց արևմտյան զարգացած պետությունների ուշադրությունը, որոնք կասպիական տարածաշրջանը սկսեցին ընկալել որպես էներգառեսուրսների արդյունահանման այլընտրանքային շրջան: Բնական հարստությունների հայտնաբերումը կասպիական նորանկախ երեք հանրապետություններին դրոշեց մերժել նախկին պայմանավորվածությունները և առաջ տանել Կասպիցի ավազանը՝ որպես ներցամաքային ծով ճանաչելու գործընթացը, որի դեպքում ծովի ջրերի բաժանումը տեղի կունենա 1982թ. ՄԱԿ-ի կողմից ընդունված Միավորված ազգերի կազմակերպության՝ ծովերի մասին կոնվենցիայով<sup>6</sup> սահմանվող հիմունքներով: Չնայած երկրաբանական տերմինաբանությամբ Կասպիցը համարվում է լիճ, սակայն իրավական փորձագետները այն համարում են ծով՝ ելնելով պատմական հղումներից:

Այստեղ անդրադառնանք «լիճ» և «ծով» սահմանումներին, որի հիմքում և ընկած է Կասպիական հարցի ձգձգման պատճառը: Ներկայիս աշխարհում տարածքային վեճերը կարգավորվում են ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիաների շրջանակում: Երբ Իրանը հղում է տալիս 1921 և 1940 թթ. կնքված պայմանագրերին, հաճախ դրանք ընկալվում են որպես ժամկետանց ոչ միայն այն պատճառով, որ ԽՍՀՄ և շահական Իրանը այլևս գոյություն չունեն, այլև այն պատճառով, որ ՄԱԿ-ը միայն 1945թ. հետո է սահմանել «նոր կանոնները»:

ՄԱԿ-ի ծովերի մասին կոնվենցիայի<sup>7</sup> համաձայն՝ «Ափամերձ պետության ինքնիշխանությունը տարածվում է նրա ցամաքային տարածքի և ներքին ջրերի, իսկ արշիպելագ պետության դեպքում՝ նրա արշիպելագային ջրերի սահմաններից դուրս՝ հարակից ծովային գոտու վրա, որն անվանվում է տարածքային ծով» (Մաս II, հոդված II, կետ I): Նույն հոդվածի II կետով՝ «Այդ ինքնիշխանությունը տարածվում է տարածքային ծովի վրայի օդա-

<sup>4</sup> Հետաքրքրական է այն փաստը, որ առաջին իրանական նավը Կասպից ծովում հայտնվեց միայն 1989թ.:

<sup>5</sup> 1979թ. Բայամական հեղափոխությունից հետո շահական Իրանը վերանվանվեց Իրանի Իսլամական Հանրապետություն և երկրում հաստատվեց աստվածապետական հասարակարգ:

<sup>6</sup> Կասպից ծովի ափամերձ պետություններից միայն Ռուսաստանի Դաշնությունն է ստորագրել և վավերացրել այս կոնվենցիան:

<sup>7</sup> Կոնվենցիան ընդունվել է 1982 թ.:

յին տարածության, ինչպես նաև նրա հատակի ու ընդերքի վրա»(Մաս II, հոդված II, կետ II): «Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի սահմանելու իր տարածքային ծովի լայնությունը մինչև 12 ծովային մղոնը չգերազանցող սահմանով, որը հաշվարկվում է սույն Կոնվենցիային համապատասխան որոշված ելակետային գծերից»<sup>8</sup>:(Մաս II, հոդված III):

Ինչպես պետությունները կարող են օգտագործել, արդյունահանել և մշակել իրենց ցամաքային տարածքում գտնվող օգտակար հանածոները, նույն տրամաբանությամբ նաև կարող են արդյունահանել ծովերի մայրցամաքային ելուստի<sup>9</sup> տակ գտնվող հանածոները<sup>10</sup>: ՄՄԿ-ի ծովերի մասին կոնվենցիան այս առիթով սահմանում է՝ «Ափամերձ պետության մայրցամաքային ելուստը ներառում է ծովի հատակը և ստորջրյա ջրերի ընդերքը, որոնք տարածվում են նրա տարածքային ծովի սահմաններից դուրս՝ պետության ցամաքային տարածքի բնական շարունակության ամբողջ երկայնքով՝ մինչև մայրցամաքի ստորջրյա ծայրամասի արտաքին սահմանը կամ 200 ծովային մղոն հեռավորության վրա այն ելակետային գծերից, որոնցից հաշվարկվում է տարածքային ծովի լայնությունը, երբ մայրցամաքի ստորջրյա ծայրամասի արտաքին սահմանը չի տարածվում այդպիսի հեռավորության վրա»: (Մաս VI, հոդված LXXVI, կետ I):

Սակայն նույն կոնվենցիայի XV կետով սահմանվում է՝ «Եթե երկու պետությունների ափերը գտնվում են դեմ դիմաց կամ հարում են միմյանց, ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, եթե նրանց միջև այլ համաձայնություն չի կայացվել,

<sup>8</sup> Անգլ. Baseline:

<sup>9</sup> Անգլ. Shelf: Մայրցամաքային շեֆը՝ մայրցամաքային ելուստը տարածվում է հարաբերականորեն մակերեսային ջրերի տակ: Ելուստների մեծ մասը առաջացել է սառցային և միջսառցային դարաշրջանների ընթացքում: Օֆշորային նավթի և գազի պաշարները հաճախ գտնվում են հենց ելուստի տարածքում:

<sup>10</sup> Այս գաղափարը առաջին անգամ արծարծեց ԱՄՆ նախագահ Հարի Ռոուսվելը: Գիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ նավթային հսկայական պաշարներ կան մայրցամաքային ելուստի տակ: 1945թ., երբ նավթի ցամաքային ռեսուրսները սկսեցին չբավարարել: Ռոուսվելը առաջ քաշեց այն գաղափարը, որ պետությունների սահմանները չեն ավարտվում իրենց ափերով, քանի որ մայրցամաքը շարունակվում է մինչև ծովի հատակը: Այդպիսով սկսվեց օրենսդրական պայքար այդ ռեսուրսներին տիրապետելու համար, որը 1953թ. հանգեց «արտաքին մայրցամաքային ելուստի» ակտին:

իրավունք չունեն իրենց տարածքային ծովը տարածել այն միջնագծից դուրս, որն անցկացվել է այնպես, որ նրա յուրաքանչյուր կետ գտնվի հավասար հեռավորության վրա այն ելակետային գծերի մոտակա կետերից, որոնցից հաշվարկվում է այդ երկու պետություններից յուրաքանչյուրի տարածքային ծովի լայնությունը: Սակայն վերը նշված դրույթը չի կիրառվում, եթե պատմականորեն ձևավորված իրավական հիմքերի կամ այլ հատուկ հանգամանքների ուժով երկու պետությունների տարածքային ծովերն անհրաժեշտ է սահմանազատել այլ կերպ, քան դա նախատեսված է սույն հոդվածով»: Կասպից ծովում հենց նմանատիպ մի իրականություն ստեղծվել է, որտեղ ծովի չափազանց կտրտվածության և ափերի անհավասար երկարության<sup>11</sup> պայմաններում գրեթե անհնար է լինում ապահովել տարածքի հավասար բաշխումը:

Իրանի և ԽՍՀՄ կողմից առաջարկված միացյալ կառավարման մեխանիզմը ամենահարմարն էր և ընդունելի տարբերակը՝ հատկապես Իրանի համար, որն ամենակարճ ափն ունի: Կոնդուինիումային տարբերակով հարցի լուծումը նաև պահանջում է կոնսենսուսով որոշումների կայացում՝ մինևույն ժամանակ հնարավորություն տալով կողմերից որևէ մեկին վետո՝ ազելանք, կիրառելու ցանկացած որոշման նկատմամբ: Իրանական կողմը նաև առաջարկել էր ստեղծել «Կասպիական նավթի և գազի կազմակերպություն»՝ կասպիական հինգ երկրների միացյալ կառավարմամբ: Միացյալ կազմակերպության զուգահեռ իրանական կողմը առաջարկում էր ստեղծել կասպիական երկրների խորհուրդ: Այս ամենի հիմքում դրվում էր այն գաղափարը, որ Կասպիցը պետք է բաժանվի հինգ հավասար մասերի՝ յուրաքանչյուր պետությանը 20 տոկոս համամասնությամբ: Այս առաջարկը մերժվեց, քանի որ ծովի տարածքը հնարավոր չէ հավասարապես բաժանել՝ հաշվի առնելով ափերի կտրտվածությունը:

1997թ. Ռուսաստանը առաջ քաշեց միջագծով (MML, Modified Median Line) ծովի տարածքները բաժանելու սկզբունքը: Միջագծով բաժանումը հանդիսանում է ափամերձ

<sup>11</sup> Այստեղ նկատի ունենք երկրների ծովափերի երկարությունները: Այս հարցը հատկապես կարևոր է Իրանի համար, որն ունի ամենակարճ ծովափը Կասպից ծովի ավազանում:

պետությունների տարածքային ջրերից հավասար հեռավորություն ունեցող կետերով անցնող գիծ: Ըստ նախաձեռնության՝ բոլոր այն ռեսուրսները որոնք գտնվում են միջազգի երկարությամբ, պետք է հավասարապես բաժանվեն այն կիսող երկրների միջև<sup>12</sup>: Համաձայն այս բաժանման՝ Ղազախստանը ստանում է ծովի հատակի 28.4 %, Ադրբեջանը՝ 21 %, Ռուսաստանը՝ 19 %, Թուրքմենստանը՝ 18%, իսկ Իրանը՝ 13.6%: Ադրբեջանը և Ղազախստանը ողջունեցին բաժանման այս սկզբունքը, սակայն Իրանը<sup>13</sup> և Թուրքմենստանը այն անընդունելի համարեցին: Այս սկզբունքով ստորագրվեցին համաձայնություններ Ռուսաստան-Ղազախստան, Ռուսաստան-Ադրբեջան և Ադրբեջան-Ղազախստան կողմերի միջև, սակայն չհաջողվեց նմանատիպ համաձայնագրեր կնքել Իրանի ու Թուրքմենստանի հետ:

Առաջացած խնդիրներ հարթելու համար ավիամերձ երկրների կողմից սկսեցին մշակվել տարբեր ձևաչափեր, որոնք թույլ կտային բանակցային սեղանի շուրջ հասնել սուր հարցերի քննարկմանը և լուծմանը: Այդպիսի առաջին հանդիպումը տեղի ունեցավ 1996թ. Աշխաբադում, որտեղ կայացավ ավիամերձ երկրների արտգործնախարարների առաջին հանդիպումը: Կարևոր է նշել, որ բացի Կասպից ծովի օրինական կարգավիճակը որոշող փաստաթղթից՝ բանակցային սեղանին էին դրվում մի շարք կարևոր ոլորտային հարցերի շուրջ փաստաթղթեր: Առաջին ոլորտային հնգակողմ համաձայնագիրը՝ Կասպից ծովի ծովային միջավայրի պահպանության մասին կոնվենցիան, ստորագրվեց Թեհրանում 2003թ.<sup>14</sup>: Թեհրանի կոնվենցիան ուժի մեջ մտավ 2006թ. օգոստոսի 12-ից, որը համարվում է «Կասպից ծովի օր»:

<sup>12</sup> Ռուսաստանը հանդես եկավ այս առաջարկությամբ՝ ելնելով արևմուտքի և Թուրքիայի՝ տարածաշրջանի էներգետիկ ռեսուրսները օգտագործելու հետաքրքրություններից: Բացի այդ այս բաժանումը հարնկնում է ՄԱԿ-ի ծովերի մասին օրենքի II մասի XV կետին:

<sup>13</sup> Իրանի այդ ժամանակվա նախագահ Մուհամմադ Խաթամին պնդում էր հավասար բաժանման սկզբունքը՝ ոչ պակաս, քան 20 % յուրաքանչյուր պետությանը:

<sup>14</sup> Մինչ օրս կոնվենցիայի շրջանակներում համաձայնություններ են ձեռք բերվել նավթային արտանետումների դեմ պայքարի, ցամաքային ռեսուրսների օգտագործումից ծովի աղտոտման պահպանման, կենսաբազմազանության պահպանման և միջսահմանային կոնտեքստում միջավայրի ազդեցությունների գնահատման շուրջ:

Առավել կարևոր և ազդեցիկ ձևաչափ է Կասպից ծովի ավիամերձ պետությունների ղեկավարների մասնակցությամբ գազաթնաժողովները: Առաջին այսպիսի գազաթնաժողովը տեղի ունեցավ 2002 թ. ապրիլին Աշխաբադում: Այս գազաթնաժողովի ընթացքում վերջնական հայտարարություն այդպես էլ չհրապարակվեց, սակայն ստորագրվեց փաստաթուղթ, որտեղ կարգավորվում էր ավիամերձ երկրների քաղաքական գործիքակազմը ապագայում Կասպից ծովի կարգավիճակը որոշելու վերաբերյալ: Բացի դրանից սահմանվում էր կողմերի համաձայնությունը Կասպից ծովի շրջակա միջավայրի պահպանության մասին:

2007թ. հոկտեմբերին Թեհրանում տեղի ունեցավ կասպիական երկրորդ գազաթնաժողովը<sup>15</sup>, որի ընթացքում ընդունվեց 25 կետից բաղկացած թեհրանյան հռչակագիրը: Կողմերը պայմանավորվեցին ապահովել տարածաշրջանի անվտանգությունը և նրա զարգացման համար ներդնել առավելագույն ջանքերը տնտեսական, դիվանագիտական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցության շրջանակներում: Բացի դրանից կողմերը պայմանավորվեցին շարունակել բանակցությունները տարածաշրջանում տրանսպորտային և էներգետիկ ոլորտներում հետագա աշխատանքը կազմակերպելու ուղղությամբ: Հռչակագրի բնապահպանական հատվածում կոչ էր արվում պետություններին պահպանել լճի բնական շրջակա միջավայրը, անդրծովյան կյանքը և արդյունավետ օգտագործել նավթագազային ռեսուրսները: Կողմերը նաև պարտավորվեցին չօգտագործել ռազմական ուժ միմյանց նկատմամբ և թույլ չտալ երրորդ երկրի օգտագործել իրենց տարածքը ռազմական գործողությունների համար: Ահաբեկչությունը, թմրանյութերի և զենքի ապօրինի շրջանառությունը համարվեցին լուրջ վտանգներ տարածաշրջանի անվտանգության համար: Թեհրանյան հռչակագրով կողմերը պատրաստակամություն էին հայտնում Կասպից ծովի կարգավիճակի հարցը լուծել կոնսենսուսի միջոցով, իսկ մինչ այդ կարող են

<sup>15</sup> Ի սկզբանե որոշվել էր, որ երկրորդ գազաթնաժողովը պետք է անցկացվի 2004թ., սակայն Թուրքմենստանի նախագահ Սապարմուրատ Նիյազովի և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի մահը հետաձգեց դրա կայացումը:

օգտվել Կասպից ծովի տրամադրած ձկնորսական, բեռնափոխադրումային հնարավորություններից և իրականացնել ազատ նավագնացություն:

Թեհրանի գազաթնաժողովից հետո իրանական դիվանագիտությունը առաջարկում է Կասպից ծովի իրավական կարգավիճակի որոշման մի նոր բանաձև, ըստ որի՝ Կասպից ծովի տարածաշրջանը պետք է բաժանվի ավիամերձ պետությունների միջև արդարության և անաչառության սկզբունքով: Այս սկզբունքի ընդունումը ուղղված էր Ռուսաստանի կողմից առաջ քաշված միջագծով բաժանման սկզբունքի դեմ, քանի որ իրանական կողմը այն համարում էր անարդար և խիստ կողմնակալ: Համաձայն դրա՝ ծովի տարածքը բաժանելիս ափի երկարությունից բացի պետք է հաշվի առնվեն նաև պետությունների պատմական իրավունքները: Այն մի կողմից պաշտպանում էր ծովի տարածքը հավասարապես բաժանելու իրանական քաղաքականության գիծը, մյուս կողմից նաև խանգարում էր միջագծով հարցի կարգավորման բանաձևին:

2010թ. Բաքվի գազաթնաժողովում ստորագրվեց կասպիական տարածաշրջանի անվտանգության ոլորտում համաձայնագիր՝ այդ թվում ահաբեկչության, թմրանյութերի անօրինական տեղափոխման և թրաֆիքինգի մասին, ինչպես նաև միացյալ հոչակագիր, որտեղ կողմերը հաստատում են բանակցությունները շարունակելու պատրաստակամությունը և ճանաչում են միմյանց սուվերեն իրավունքները կասպիական ռեսուրսների նկատմամբ:

2014թ. սեպտեմբերին Աստրախանում տեղի ունեցավ ավիամերձ պետությունների IV գազաթնաժողովը, որտեղ ստորագրվեց հայտարարություն Կասպից ծովի կարգավիճակը որոշելու հիմնական սկզբունքների մասին: Կնքվեցին միջկառավարական համաձայնագրեր ծովի շրջակա միջավայրի պահպանության և հիդրոլոգիկականության շուրջ: Քննարկման առարկա դարձան նաև հյուսիս-հարավ տրանսպորտային և երկաթուղային միջանցքի մասին մի շարք հարցեր: Գազաթնաժողովի ավարտական արձանագրության մեջ ամրապնդվեց նաև Կասպիական տարածաշրջանում երրորդ պետությունների ռազ-

մական ուժերի ներկայության անթույլատրելիության հարցը, որը հատկապես բխում է Ռուսաստանի և Իրանի շահերից: Հարկ է նշել, որ գազաթնաժողովի ընթացքում երկկողմանի համաձայնագրեր կնքվեցին Ռուսաստանի, Ղազախստանի և Ադրբեջանի միջև, սակայն իրենց կարևորությամբ չեն կարող աչքի ըկնել, մինչև դրանց չմիանան Իրանը և Թուրքմենստանը:

2018թ. օգոստոսի 12-ին Ղազախստանի Ակտաու քաղաքում Կասպիական երկրների V գազաթնաժողովի ժամանակ հաստատվեց Կասպից ծովի շուրջ իրավական կոնվենցիա՝ 24 կետից բաղկացած, որն ապահովում էր ծովի նկատմամբ իրավական փաթեթ: Կոնվենցիայի II և III հոդվածներով կողմերը պարտավորվում են հարգել միմյանց ինքնիշխանությունը, Կասպից ծովի տարածքում բացառիկ իրավունքները, ինչպես նաև պահպանել ծովի շրջակա միջավայրը, անդրծովյան կյանքը: Առանձին կետերով անդրադարձ է կատարվում տարածաշրջանային կայունությանը նպաստելը, համաչափ զինմանը, միայն ավիամերձ պետությունների դրոշի ներքո գտնվող նավերի ազատ և անվտանգ նավագնացությանը, քաղաքացիական օդանավերի անվտանգ և ազատ տեղաշարժին՝ համաձայն ՄՔԱԿ<sup>16</sup> օերնքների (հոդված III կետ 1, 2, 3, 4, 8, 9, 16): Հատկապես կարևոր է III հոդվածի 6-րդ կետը, որով հաստատվում է կողմերի համաձայնությունը բացառելու ոչ կասպիական՝ երրորդ պետության զինված ուժերի ներկայությունը տարածաշրջանում: Ըստ կոնվենցիայի՝ Կասպից ծովի ջրային տարածքները պետք է բաժանվեն ներքին, տարածքային, ձկնորսական և ընդհանուր ծովային հատվածների (հոդված V): Պայմանագրի համաձայն՝

- Յուրաքանչյուր պետության ինքնիշխանությունը տարածվում է իր ցամաքային գոտուց մինչև տարածքային ջրեր՝ ընդգրկելով նաև օդային տարածքը (հոդված VI):

- Յուրաքանչյուր պետության տարածքային ջրերի խորությունը հաշվում է բնական ելակետից 15 մղոն խորությամբ դեպի ծով՝ ողջ տարածքի երկարությամբ: Կասպիական ավազանի հատակի բաժանումը պետք է տեղի ունենա երկրների միջև երկկողմանի պայմա-

<sup>16</sup> Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպություն:

նագրերի կնքման միջոցով՝ համաձայն միջազգային իրավունքի և օրենքների՝ հնարավորություն տալով այդ պետություններին իրականացնելու իրենց տարածքում էներգետիկ ռեսուրսների հետազոտումը և արդյունահանումը (հոդված VIII կետ 1):

- Ձկնորսության համար սահմանվում է 10 մղոն խորությամբ տարածք՝ հաշվարկված տարածքային ջրերի սահմանի ելակետից: Պետությունների միջև ձկնորսական գոտիների բաժանումը պետք է իրականացվի առանձին համաձայնագրերով՝ հիմք ընդունելով միջազգային իրավունքի նորմերը (հոդված IX կետ 1):

Կասպից ծովի հատակի բաժանման հարցը միջկառավարական համաձայնությունների թողնելով՝ բավարարվում են իրանական կողմի որոշ սպասելիքներ: Մեկ այլ կարևոր կետ է որևէ երրորդ պետության ռազմական ներկայության բացառումը կասպիական տարածաշրջանում՝ ակնարկելով ԱՄՆ և ՆԱՏՕ ուժերը, ինչը կարևոր է հատկապես Ռուսաստանի և Իրանի համար: Կոնվենցիայով, փաստորեն, Կասպից ծովին որևէ կարգավիճակ չի տրվում, այսինքն՝ այն չի սահմանվում ո՛չ լիճ, ո՛չ էլ ծով, այլ անվանվում է «ներքին ջրային տարածք»: Սա հնարավորություն է տալիս կոնվենցիայի շրջանակներում օրինականության ապահովմամբ շրջանցել ՄԱԿ-ի որոշ կանոնադրական դրոյթներ:

Վլադիմիր Պուտինը պայմնագիրը ստորագրելիս նշեց, «...որ կասպիական տարածաշրջանը կարևոր ազդեցություն ունի Աֆղանստանի, Մերձավոր Արևելքի անվտանգության համար»: Իրանի նախագահ Հասսան Ռոուհանին նշեց, «... որ պետությունները կասպիական համաձայնագրով կարևոր քայլեր են ձեռնարկել, սակայն պետք է փաստել, որ կան ավելի կարևոր հարցեր, որոնք պետք է արժանանան ուշադրության»:

Կասպից ծովի ջրային տարածքների բաժանման մեկ այլ խնդիր է ձկնորսության կազմակերպումը: Համաշխարհային շուկայում վաճառվող սև խավիարի 80-90% արտահանվում է հենց այս շրջանից: Հատկապես մեծ քանկությամբ խավիար են արտահանում Ադրբեջանը և Ղազախստանը: Ինչպես նկատում ենք, կոնվենցիային այս հարցով ևս

անդրադարձ կա՝ կարևորելով նաև լճում ջրերի մաքրության, բնական միջավայրի պահպանման հարցը:

Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը անընդհատ պատճառ է դառնում կոնֆլիկտների՝ հատկապես նավթագազային հանքերի շահագործման ոլորտում: Հատկապես սուր են վեճերը Ադրբեջանի, Թուրքմենստանի և Իրանի միջև:

Կարճ ակնարկով անդրադառնանք նաև Կասպից ծովի տարածքում իրականացված և իրականացվող նավթագազային ծրագրերին և ԻԻՀ դիրքորոշմանը: Նախապես նշենք, որ ԻԻՀ-ն Կասպից ծովի տարածքում դեռևս նավթագազային արդյունահանում չի իրականացնում: Մրա հիմնական պատճառներից մեկը երկրի հարավում բավականին մեծ պաշարներ ունեցող հանքերն են, որոնց շահագործումը շարունակվում է առ այսօր: Մյուս կարևոր պատճառը տեխնիկական հնարավորությունների սղությունն է՝ հատկապես ԱՄՆ կողմից միջազգային պատժամիջոցներից հետո, երբ Իրանը դժվարություններ ունի իր տնտեսական կյանքում, և բացի այդ դժվարանում է գնել ժամանակակից տեխնիկական միջոցներ, քանի որ պետության նավթագազային ոլորտը գտնվում է միջազգային պատժամիջոցների տակ:

Կասպից ծովի տարածքում առկա նավթագազային պաշարների նկատմամբ հետաքրքրությունները ձևավորում են ավիամերձ պետությունների արտաքին օրակարգը: Հատկապես սուր են Իրան-Ադրբեջան և Ադրբեջան-Թուրքմենստան հարաբերությունները լճի պաշարների յուրացման տեսանկյունից:

ՄԱԿ-ի ծովերի մասին կոնվենցիայի համաձայն՝ մայրցամաքային ելուստի նկատմամբ ավիամերձ պետության իրավունքների մասին LXXVII հոդվածի I կետում նշվում է. «Ափամերձ պետությունը մայրցամաքային ելուստի նկատմամբ իրականացնում է ինքնիշխան իրավունքներ՝ դրա բնական պաշարների հետախուզման և շահագործման նպատակով» (Մաս VI, հոդված LXXVII, կետ I): Նույն հոդվածի II կետում նշվում է. «I կետում նշված իրավունքները բացառիկ են այն իմաստով, որ եթե ավիամերձ պետությունը մայրցամաքային պետության հետախուզում չի իրականացնում կամ չի շահագործում դրա

բնական պաշարները, ոչ ոք չի կարող դա անել առանց ավամերձ պետության՝ որոշակիորեն արտահայտված համաձայնության» (Մաս VI, հոդված LXXVII, կետ II): «Ավամերձ պետությունն ունի բացառիկ իրավունք՝ թույլատրելու և կարգավորելու մայրցամաքային ելուստի վրա ցանկացած նպատակով կատարվող հորատման աշխատանքները» (Մաս VI, հոդված LXXXI):

1998թ. Ադրբեջանի և Իրանի միջև խնդիր առաջացավ Ալով (ադր)-Ալբորզ (պրս) հանքի շուրջ, որի նավթային պաշարները գնահատվում են շուրջ 2,6 մլրդ բարել, իսկ գազային պաշարները՝ շուրջ 2,4 մլրդ խորանարդ մետր: Ադրբեջանական կողմը՝ նավթային կազմակերպություններից մեկի՝ Բրիթիշ Փեթրոլիումի (այսուհետ ԲՓ) հետ պայամանգիր է կնքում Ալով-Ալբորզի հանքաշերտը ուսումնասիրելու ուղղությամբ, սակայն սա առաջացնում է իրանական կողմի դժգոհությունը: Իրանը պահանջում է դադարեցնել ծովի այդ հատվածի ուսումնասիրմանը միտված որևէ տեսակի գործողություն՝ թողնելով այն մինչև կասպիական հարցի վերջնական կարգավորմանը: Ի պատասխան ադրբեջանական քայլերի՝ իրանական հետախուզական նավերը նույնպես սկսեցին Ալով-Ալբորզի ուսումնասիրությունները: Իրավիճակը հատկապես սրվեց, երբ իրանական ռազմական ուղղաթիռները սպառնացին հարվածել ԲՓ-ի համար ուսումնասիրություններ անող նավերին, որից հետո ԲՓ-ն հրաժարվեց շարունակել ուսումնասիրությունները: Ալով-Ալբորզի հարցը շարունակվում է առկախ մնալ: Միայն 2016թ. Իլիամ Ալիևը և Հասսան Ռոուհանին Իրանում հայտարարեցին, որ իրենք հասել են որոշակի համաձայնությունների, սակայն որևէ մանրամասնություն չհրապարակեցին:

Տարածաշրջանային խոշոր նավթագազային ծրագրերից է Տրանս-կասպիական գազամուղը, որը հաճախ անվանում են «Հարավային գազային միջանցք»: Բանն այն է, որ եվրոպական պետությունները, ռուսական գազին այլընտրանք փնտրելով, կասպիական տարածաշրջանը ընկալում են որպես այլընտրանք: Դրան հատկապես նպաստում է Ադրբեջանի կողմից կառուցվող և գովազդվող Բաքու-Թբիլիսի-Էրզրում, Տրանսանատոլիա-

կան և Տրանսադրիատիկ գազամուղները<sup>17</sup>: Նպատակն է Ադրբեջանական գազը հասցնել Իտալիայի հարավ, որտեղից այն եվրոպական միացյալ գազամուղային համակարգի միջոցով կփոխադրվի ԵՄ անդամ մյուս պետություններ: Գազամուղը անցնելու է Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, Հունաստանի, Բուլղարիայի, Ալբանիայի, տարածքներով և Ադրիատիկ ծովի տակով հասնելու է Իտալիա: 2019. Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևը և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոհանը Էդիրնեում հանդիսավոր կերպով բացեցին TANAP գազամուղը, որը ձգվում է թուրք-վրացական սահմանից մինչև թուրք-հունական սահման: Գազային այս հսկայական ծրագիրը իրականացնելիս Ադրբեջանին հատկապես անհրաժեշտ կլինի բավարար քանակությամբ գազ ուղարկել Եվրոպա, որպեսզի մրցունակ լինի շուկայում: Քանի որ Ադրբեջանի արդյունաբերական հնարավորությունները չեն բավարարում եվրոպական շուկա անհրաժեշտ քանակությամբ գազ տեղափոխելու համար, Ադրբեջանը փորձում է այլընտրանքներ փնտրել, որոնցից մեկը հանդիսանում է էժան թուրքմենական գազը:

Տրանս-կասպիական գազամուղի ծրագրի իրականացման գաղափարը ծագել է դեռևս 90-ական թթ. երկրորդ կեսին, երբ Քլինթոնի վարչակարգը հայտարարեց տրանս-կասպիական գազամուղի ստեղծման նախաձեռնության մասին: Սկզբում Թուրքիան և Թուրքմենստանը ստորագրեցին գազը Թուրքիայի տարածքով փոխադրելու մասին հուշագիր, սակայն ֆինանսական և մի շարք այլ պատճառներով բանակցությունները այդպես էլ որևէ արդյունքի չհանգան: 2015թ. Աշխաբադում Ադրբեջանի և Թուրքմենստանի նախագահները հանդես եկան հետաքրքրությամբ Կասպից ծովի տարածքով գազամուղ անցկացնելու շուրջ, որը ողջունեցին ԵՄ-ն և Թուրքիան:

Տրանս-կասպիական գազամուղի նախագիծը տնտեսապես և քաղաքականապես չի

<sup>17</sup> Մրանք մեկ ընդհանուր գազամուղի հատվածներ են, որը ձգվելու է Բաքվից մինչև Հարավային Իտալիա: Նախատեսվում է սկզբնական շրջանում Եվրոպա արտահանել տարեկան մոտ 16 միլիոն խոր. մետր գազ, որի ծավալները հետագայում կընդարձակվեն ընդհուպ մինչև 31 միլիոն խոր. մետրի: Սկզբնական 16 միլիոն խոր. մետրի 6 միլիոնը կմնա Թուրքիայում, իսկ մնացած հատվածը կուղղվի դեպի Եվրոպա:



համապատասխանում Ռուսաստանի և ԻԻՀ հետաքրքրություններին, որոնք շարունակ բարձրացնում են կասպիական տարածաշրջանի վրա գազամուղի էկոլոգիական հետևանքների հարցը: Տնտեսության տեսանկյունից եթե ադրբեջանական գազը հասնի Եվրոպա, նրա հիմնական մրցակիցը լինելու է ռուսական գազը, ինչը Ռուսաստանի համար անընդունելի է: Իրանական կողմի համար անընդունելի է այն փաստը, որ տարածաշրջանային խոշոր նավթագազային ծրագիրը շրջանցում է իր տարածքը: Հայտնի «Նաբուկո» ծրագրի տապալումից հետո Իրանը ցանկանում է իր տարածքը որպես տրանզիտային գոտի, տրամադրել թուրքմենական գազը Ադրբեջան հասցնելու և այնտեղից Եվրոպա փոխադրելու համար:

Կարելի է եզրակացնել, որ Իրանը ապագայում ևս շարունակելու է կասպիական քաղաքականության մեջ նվազագույն զիջումներով հասնել որոշակի արդյունքների: Կասպից ծովի հարցի շուրջ շարունակական բանակցությունները ցույց են տալիս, որ հարցի բոլորի կողմերի համար հավասարապես ընդունելի լուծում այս պահին չկա: Ռուսաստանի և Ղազախստանի հետ այս հարցում Իրանը սկզբունքային որևէ հակասություն չունի: Մինչդեռ Ադրբեջանի և Թուրքմենստանի հետ տարվող բանակցություններում Իրանը ձգտում է ոչ միայն անմասն չմնալ տարածաշրջային նավթագազային ծրագրերից, այլ նաև ձգտում է ամեն կերպ սահմանափակել այս երկրների կողմից նոր հանքահորերի շահագործումը:

Ներկայումս Իրանը գտնվում է չափազանց ծանր տնտեսական պատժամիջոցների տակ, ԱՄՆ դուրս գալուց հետո միջուկային համաձայնագիրը գրեթե ձախողման եզրին է, շարունակական քաղաքական ճգնաժամերը Լիբանանում և Իրաքում, պատերազմները՝ Սիրիայում և Եմենում ստիպում են Իրանին իր ողջ ուժերը կենտրոնացնել այս ուղղություններով: Սրանից կարող ենք եզրակացնել, որ կասպիական տարածաշրջանում ստա-

տուս քվոնի պահպանումը այս պահին կենսական նշանակություն ունի Իրանի համար:

### Օգտագործված գրականության ցանկ

1. **Chufrin G.**, “The Security of the Caspian Sea Region”, Oxford, UK, 2001, pp.64-69
2. **Jenkins W. B.**, “Tariffs, Treaties, Trade: Integrating Tsarist Russian and Qajar Persian Markets under the Nineteenth Century Global Condition”, London, 2019.
3. **Parker J. W.**, “Persian Dreams: Moscow and Tehran since the Fall of the Shah”, Potomac Books, 2009, p 152.
4. **Васильева О. А.**, “Советско-Иранский Договор 1921 года”, Елец, 2014. № 16 (187). Выпуск 29.
5. Ежемесячный аналитический дайджест Восточного партнерства, “Статус Каспийского моря. Долгожданная конвенция”, N 4, 2018
6. **Ֆայրուրդյան Վ.**, «Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)», Երևան, 2005:
7. **Bahman Agha Diba**, “Baku Summit and New Policy of Iran in the Caspian Sea”, 2010 <http://www.payvand.com/news/10/nov/1211.html>
8. Conference of Plenipotentiaries. <http://www.tehranconvention.org/spip.php?article33>
9. Convention on the Legal Status of the Caspian. <http://en.kremlin.ru/supplement/5328>
10. General Information on the First Caspian Economic Forum. <https://www.mfa.gov.tm/en/cef>
11. General Information on the First Caspian Economic Forum. <https://www.mfa.gov.tm/en/cef>
12. **Israelyan A.**, “Caspian Sea Summit”, Orbeli Center, 2019. <https://www.orbeli.am/en/post/107/2019-01-17/Caspian+Sea+Summit>
13. Landmark Caspian Sea Deal Signed by Five Coastal Nations. <https://www.theguardian.com/world/2018/aug/12/landmark-caspian-sea-deal-signed-among-five-coastal-nations>
14. Turkey, Azerbaijan Inaugurate Gas Pipeline Project. <https://www.aa.com.tr/en/europe/turkey-azerbaijan-inaugurate-gas-pipeline-project/1660062>
15. UN Convention on the Law of Sea, Article 2 [https://www.un.org/depts/los/convention\\_agreements/texts/unclos/closindx.htm](https://www.un.org/depts/los/convention_agreements/texts/unclos/closindx.htm)
16. Месторождение Кашаган <https://www.kbv.kz/project/>
17. Договор о торговле и мореплавании между Союзом Советских Социалистических Республик и Ираном. <http://docs.cntd.ru/document/901861932>
18. Туркманчайский мирный договор <http://doc.histrf.ru/19/turkmanchayskiy-mirnyy-dogovor/>

*Տժննդարկվել է՝ 11.03.2020  
 Րեցենզրվոննվել է՝ 14.03.2020  
 Քրրննվել է՝ 19.03.2020*